ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք
Մելքոնյան փողոց 76, Հեռ.՝ +37410644929, Էլ. փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

04 հունիսի 2019 թ. թիվ 01/03/666-19

«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Ն.ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բունիաթյան.

Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի և «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 25-ին կնքված թիվ «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/12» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը մինչև 2019 թվականի մայիսի 25-ը պետք է իրականացներ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի կարիքների համար մանկապարտեզի շենքի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննությունների եզրակացությունների տրամադրման կատարման աշխատանքներ, ինչը պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարվել:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, որի վերջնաժամկետը լրացել է 25.05.2019 թվականին:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայամանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կան փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Հիմք ընդունելով «ԿՄՋՀ- ԳՀԱՇՁԲ -19/12» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.3 կետի պահանջները՝ Ջրվեժի համայնքապետարանը 2019 թվականի հունիսի 4-ին միակողմանի լուծում է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ -19/12» ծածկագրով գնման պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ջրվեժի համայնքապետարանի գանձապետական «900105228069» հաշվեհամարին փոխանցել գանձման ենթակա 195 000 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%):

Միաժամանակ հայտնում եմ, որ պայմանագրի ապահովումը վերը նշված հաշվեհամարին սահմանված ժամկետում չփոխանցելու դեպքում, համաձայն պայմանագրի կատարման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 1.3 կետի՝ համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը կներկայացվի ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի կատարման ապահովման գումարները գանձելու նպատակով:

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Մարգարյան
հեռ.՝ (010)644929;055-735553